Տ. ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ՝ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ[1]

Խոսքիս սկզբում քրիստոնեական ամենաջերմ սիրով կամենում եմ ողջունել բոլոր ներկաներիդ եւ առավել ջերմությամբ գնահատել այսօրինակ ձեռնարկները, որոնք միտված են ստեղծելու առողջ եւ գիտակից հասարակություն եւ այն օժտելու արհեստավարժ ու տաղանդավոր մասնագետներով:

Վստահ եմ, որ այս հավաքի հաջողությունը ոչ միայն իր իմաստով մտահոգություններ արտահայտող միջոցառում պետք է դիտարկվի, այլ առավել շինիչ, նորոգիչ իր ուժով պիտի գա նորանոր ծրագրեր ձեռնարկելու, որոնք համատեղ ջանքերով եւ անձնվեր մարդկանց նվիրումով կվերածվեն աշխատանքի, իսկ ուր աշխատանք կա, այնտեղից չեն կարող բացակայել առատ արդյունքները՝ մեկի դիմաց 10, 40, 60 կամ 100:

Մտածումներս ցանկանում եմ սկսել Աստվածաշնչյան մի մեջբերումով, որտեղ մեր հայրերի Տեր Աստված տասնաբանյա պատվիրանները տալուց հետո շեշտում է . »Այս պատգամները, որ այսօր հաղորդում եմ քեզ, կպահես մտքիդ ու հոգուդ մեջ: Դրանք կհաղորդես քո որդիներին եւ դրանց մասին կխոսես, երբ տանը նստած ես, ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս: Դրանք որպես նշան կկապես քո ձեռքին, որ մնան անշարժ քո աչքերի առջեւ, դրանք կգրես քո տների մուտքին ու դռների վրա:« /Երկրորդ Օրենք.6.6/: Մարդկային չափանիշները հաստատուն չեն, վկան՝ օրեցօր փոփոխվող օրենքները, հարաբերությունները, քանզի մարդկային գիտելիքներն ու փորձառության հարստացումը տանում է այդ փոփոխության: Իսկ այն պատգամները կամ պատվիրանները, որոնք Աստվածադիր են, կարող են չփոփոխվող արժեհամակարգի հիմք դառնալ, ինչի վկան են ամբողջությամբ քրիստոնեական արժեքների վրա հիմնված մեր այսօրվա քաղաքակրթության նվաճումները: Աշխարհի ստեղծագործության սկզբից մեզ է հայտնվում ընտանիքի սրբության ու մարդկային իրավական կերպարի բարոյական նկարագիրը, թե ինչպես Արարիչն Աստված հողեղեն մարդուն Իր բանական հոգին է փոխանցում՝ անմահ լինելու պատիվը պարգեւելով: Սակայն շատ կարեւոր մի դիտարկում. Աստված այդ անմահությունը դրեց ազատ ընտրության հնարավորության վրա, որը խափանվեց նախահայր Ադամի կողմից:

Աստված եւ մարդ փոխհարաբերությունը մեզ հայտնվում ու զարգանում է Հին Կտակարանի առաջին էջերից, որտեղ Աստված խոսում է Ադամին, Նոյին, Աբրահամին, Իսահակին ու Հակոբին, Մովսեսին եւ մյուս մեծ ու փոքր բոլոր մարգարեներին, ովքեր առաքելություն ունեին երկրի վրա իրականացնելու: Ճիշտ այդ փոխհարաբերությունն է հաճախ սխալի

1 Հոդվածը սույն թվականի հոկտեմբերի 28-ին »Տաղանդների կառավարման լավագույն փորձը, մարտահրավերները եւ Հայաստանի կազմակերպությունները« թեմայով ՀՀ առաջին ազգային խորհրդաժողովում ընթերցված բանախոսության ընդարձակ տարբերակն է:

ու սայթաքումի պատճառով շեղում մարդկային կարգավորված կյանքի ընթացքը, հենց այդ ազատ ընտրելու հնարավորությունը եղծեց աստվածատիպ պատկերը, երբ տերունավանդ կյանքի ճանապարհը շեղվեց մարդու մեղքի պատճառով:

Եթե Աստված-մարդ փոխհարաբերությունը դիտարկենք աշխարհի ստեղծագործության հառաջգնացության ընթացքի մեջ, ապա կտեսնենք, որ Աստված մարդուն հայտնվում էր ոչ մարդկային՝ նյութական արտահայտությամբ, այլ օրինակներով՝ այրվող մորենու, ամպեղեն սյունի կամ ձայնի ներթափանցման ճանապարհով մարդկային հոգու մեջ: Այնուհետև Աստված խոսեց վերջին մարգարեների հայտնությամբ, սակայն այս անգամ՝ ներշնչման ճանապարհով, թե գալու է ժամանակն անհրաժեշտ աստվածային հրաշագործությունների. անգամ Կոյսը պիտի հղանա եւ Որդի պիտի ծնի՝ անաղարտ պահելով իր կուսությունը, եւ այդ Որդին Փրկիչն է աշխարհի: Ըստ այսմ, Մեսիայի հայտնվելու կանխագուշակությունն անելով՝ մարգարեները հայտնեցին Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի գալուստը, Ով Նոր Կտակարանի մեջ Փրկության ճանապարհն իմաստավորեց սիրո հասկացողությամբ:

Գալով մեր օրերին՝ պետք է նշել, որ նկատելի են Աստված եւ Մարդ փոխհարաբերության արհեստական արտահայտումներ, այդ կապը կարծես խզվել է ու խաթարվում է հետզհետե: Ազատ ընտրության հնարավորության ծայրահեղ գործածումը տանում է քառսային վիճակի, մարդ արարածը ժամանակի հետ նյութական ապահովությամբ հասկանում է, թե այդ նույն կյանքը, որն ապրում էին մարդիկ Սողոմոն Իմաստունի ժամանակ, նույն ունայնության սահմանի մեջ է այսօր: Ուստի մարդկային կյանքը չի փոխվել, այլ աշխարհընկալումը եւ մարդու՝ կյանքին նայելու կերպն է, որ նյութի առատության ճանապարհով տանում է դեպի հոգեւոր աղքատություն՝ մոռանալով Տիրոջ խոսքը՝ »գանձեր դիզեցեք երկնքում«, այսինքն՝ հոգեւոր արժեքները գերադասեք ժամանակավորներից: Հետեւաբար մարդ արարածը շեղվել է իր Աստվածային կերպավորումից այն ժամանակ, երբ սկսել է հարց տալ իր կյանքում առկա թերությունների ու պակասների մասին եւ խուսափել պատասխանից: Այսինքն՝ մարդն իր Աստվածային կերպը ջնջում եւ վերացնում է՝ հագուրդ տալով իր զոհացումներին եւ կենցաղային զգացական ձգտումների հագեցմանը՝ ագահ, անկուշտ, հարստության տենչող տառապանքի կեցվածքով: Ամբողջ աշխարհն այսօր ասես տառապում է ինքնասիրության ծայրահեղ ու հիվանդագին զգացումից: Միով բանիվ, հավաքական ու ընկերային մեր կյանքում, համայնքային արդի խնդիրները, որ ծառացել են մեր առօրյայի մեջ անձնականացել են եւ պատճառը հաշվետու չլինելն է՝ նախ ամեն անձ իր ԵՍի՝ ներքին խղճի առաջ, եւ ապա՝ իր նմանի, ով նույնքան իրավասու է՝ իբրեւ կատարվածի հետեւանքը կրող, եւ վերջապես՝ Աստուծո հայացքի առջեւ, ինչպես Ինքը՝ Քրիստոս է առակով տալիս օրինակը (հմմտ. Ղուկ. ԺԸ 1-8): Մեր խոսքի միտք բանին ավելի պարզեցնելու դիտավորությամբ փորձենք հասկանալ »արժեք« հասկացության իմաստը:

»Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում« այն բացատրվում է իբրեւ »հասարակության համար կարեւոր նշանակություն ունեցող արժեքավոր առարկա, երեւույթ, գործ, օր.՝ նյութական արժեքներ, հոգեւոր արժեքներ, ազգային արժեքներ«[2]: Ստ. Մալխասյանցի »Հայերեն բացատրական բառարանում« »արժեքը« ներկայացվում է իբրեւ

2 »Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան«, հտ. Ա (Ա-Ե), Երեւան, 1969, »արժեք« բառահոդվածի տակ :

»այն հատկութիւնը, որ ստանում է առարկան, նկատի առնելով նրա հասարակական օգտակարութիւնը կամ աշխատանքը, որ գործ է դրւում նրան ձեռք բերելու կամ արտադրելու համար«, կամ՝ »իր, որ հասարակական օգտակարութիւն ունի եւ ձեռք է բերուած աշխատանքով«, կամ՝ առավել ուշադրության արժանի վերջին բացատրությունը՝ »նշանակութիւն, ուշադրութեան արժանի հատկութիւն«[3]: Ինչպես հստակորեն նկատելի է վերոնշյալից, »արժեք« կամ »փաղանդը« հայտնաբերվում ու հռչակվում է, երբ այդ երեւույթին հավաքականությունը հավանություն է տալիս կամ հասարակության մեջ գնահատվում է այդ երեւույթի օգտակարությունը: Քրիստոնեական բարոյականության պրիսմակով դիտարկված՝ արժեքը կամ արժեհամակարգը կերտվում է ճշմարտության՝ Տիրոջ Խոսքի հենքի վրա եւ միս ու արյուն է ստանում մարդկային կենսափորձով: Բարոյական արժեքներն օգնում են մարդուն իր կարողությունների ազատության մեջ դրանք օգտագործել ի նպաստ հանրության, որով էլ դրանք արտացոլվում են մարդկային անհատական կյանքի ճշմարիտ կենսակերպի մեջ, եւ նպաստում մարդու առավել երջանիկ դառնալուն:

Հայտնի խոսք կա. »Հայրենիքը սիրելու համար այն պետք է ճանաչել«: Ազգային մեր կյանքում, պատմության ընթացքում մենք հավաքաբար արժեքային մի քանի արտահայտությունների ձեռքբերումներ ունենք՝ լեզու, որին մայրենի ծնողական մակդիրն ենք տվել, գիր-գրականություն, ազգային արվեստ եւ մշակույթ, պատմության լույսով արդարացված եւ սերնդեսերունդ անխախտ կերպով փոխանցված, սրբազան դարձած ավանդույթներ: Վերոնշյալ ավանդույթները, եթե որեւէ ժամանակ թյուրվել են, եսակենտրոն մտածելակերպի եւ ես-ի սխալ ընկալման ու գործածության արդյունք են եղել: Անձնական ես-ի ձեւավորումն աստիճանաբար անհատական գիտակցությունից վերաճում է հասարակության մեջ որպես անհատ եւ մեկն այդ հասարակության ընկալման, ապա ի վերջո, երբ անհատն իրեն տեսնում է իբրեւ համամարդկայինի մի մասնիկ եւ արժեւորում ու գնահատում է իր դերն ու մասնակցությունն ամբողջականության մեջ: Մարդու գիտակցության այս աստիճանական զարգացումն անձնականից ազգային, որից եւ՝ համամարդկային միջավայր, մեր չափանիշներով առողջ եւ բնականոն ընթացք է: Իսկ այս աստիճանական, աճողական ընթացքի մեջ որեւէ հանգրվանում, երբ ունենում ենք շեղում կամ խաթարում, այդ նույն արժեքը, իբրեւ ուշադրության արժանի հատկություն, դադարում է գնահատվել իր ամբողջական ընկալունակության մեջ եւ ենթարկվում իմաստային խեղաթյուրման: Դրանով է հրամայական դառնում սեփական արժեքների ճանաչողությունը՝ կիրառելով այն անձնական եւ հասարակական մեր կյանքի բոլոր ոլորտներում, ինչի արդյունքում կունենանք առողջ միջավայր կամ բարոյական արժեհամարկարգի կրող հասարակություն:

Առողջ հասարակության հիմնասյունն առողջ ընտանիքն է: IV դարի եկեղեցական հայրերից մեկը հասարակության առողջացման դեղամիջոց է սահմանում շիտակ ավանդույթներով ապրող ընտանիքը. »Լավ ընտանիքը բարեգործություն է հասարակությանը«: Ընտանիք, որտեղ ամուսինները »ծնողանում« են՝ կերտելով իրենց դրախտի մոդելի ստեղծագործական մշակույթը: Մեր միջավայրի ժամանակակից ընտանիքի արժեքային թյուր ընկալումը, ցավոք, հաճախ հանգեցնում է ներընտանեկան ոչ ճիշտ հարաբերակցության:

3 **Սպ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հտ. Ա (Ա-Ե), Բեյրութ, 1955, նշյալ բառահոդվածի տակ :

Միևնույն վտանգն առկա է նաև կրթահամակարգում՝ իբրև *պագնապ*: Երբեմն քաղաքակիրթ աշխարհի »նվաճումների« ներմուծումը մեր կենցաղ եւ բախումն ավանդականի հետ հանգեցնում է կտրուկ փոփոխության եւ ավանդողի ու ընկալողի միջեւ հակասության: Վերոնշյալ *պագնապն* առկա է նաև քրիստոնյաների հավաքականության մեջ՝ եկեղեցում, քանզի նոր սերնդի հայացքն ու ուշադրությունը գրավված է այլ արժեքներով: Շատ հաճախ դրանք պատճառաբանվում են կյանքի պայմաններով եւ աշխարհաքաղաքական վիճակների կտրուկ փոփոխությամբ: Իսկ եկեղեցին *եկեղեցանում* է իր գիտակից, հավատավոր ժողովրդով եւ արդարանում իր գոյության մեջ, երբ այդ ժողովուրդը ճանաչում եւ արտացոլում է եկեղեցու խորհուրդն իր գոյութենական կենսակերպի մեջ:

Մեր ընկալմամբ, այսօրինակ հավաքները եւ ընդհանրապես տաղանդների՝ իբրեւ առաջնորդների պատրաստության գործընթացը կենսական նշանակություն կարող է ունենալ պետականության պահպանման եւ ազգի գոյության համար: Պատմությունն օրինակներ շատ ունի: Բերենք մեզ համար ամենացայտուն օրինակը: Սահակ Պարթեւ հայրապետը եւ Մաշտոց վարդապետը գրերի գյուտից հետո *ընտրեցին* աշակերտներ, որոնցով հիմնվեց այն դպրոցը, որ պիտի պատրաստեր ու որից պիտի դուրս գային ոչ միայն հոգեւոր, այլեւ ազգային ու հասարակական տարբեր դաշտեր ձեւավորող առաջնորդներ՝ օժտված բարոյական արժեհամարակգային գիտակցությամբ եւ հոգեւոր շնչով: Դրանով է կարեւորվում տաղանդի՝ իբրեւ առաջնորդի պատրաստությունը եւ կայացումը: Պետք է խոստովանել, որ համաշխարհային ողբերգությունների հեղինակները, լինեն գերմանացի, չինացի թե թուրք, մեծ մասամբ խելացի եւ տաղանդավոր մարդիկ էին: Նրանց արժեհամակարգի ընկալումները եւ ըստ այդմ՝ շահագրգռություններն արմատապես տարբերվում էին հասարակության մեծ մասի պատկերացումներից:

Ավետարանական դրվագների համաձայն արժեքային փոփոխությունը եւ հոգեւորի սինթեզը կարող է ձկնորսին դարձնել առաքյալ՝ »լիդեր«, ով Քրիստոսի օրինակով անհատական խոսքի ուժի միջոցով կարող է ներազդել եւ վերափոխել մի ողջ հասարակություն՝ որդեգրել տալով նոր՝ ավելի կենսունակ, վսեմ ու երջանկացնող արժեհամակարգ:

Նորը կերտելու լավագույն ճանապարհը հնի ճանաչումը, յուրացումն ու գնահատումն է եւ այս ամբողջի՝ հնի եւ նորի, ազգայինի ու համամարդկայինի, աշխարհայինի եւ հոգեւորի ճիշտ համադրումը հասարակություն, եկեղեցի, դպրոց, ընտանիք դաշտերում: Միջավայրի առողջացումը ձեռքբերվածի վերարժեւորման եւ համաշխարհային փորձի՝ ազգայինի մեջ ներդրման արդյունքն է: Եթե ոսկեդարյան թարգմանիչ վարդապետները համաշխարհային գլուխգործոցները ճանաչեցրին մեզ, այդ արեցին ազգային յուրացման ճանապարհով, որով թարգմանչությունը դարձավ այս համադրության արվեստը: Ոչ թե մեկն արժեւորել մյուսը կորցնելու պայմանով, այլ սեփական մաղով անցկացնել եւ դրա համաձուլումը կառուցել ինքնության գիտակցության հենքի վրա: Մենք պետք է կարեւորենք տաղանդների՝ իբրեւ առաջնորդների՝ որպես բարոյական անհատներ պատրաստությունը՝ նրանց համար մշակվող կրթական ծրագրերում առանցքային նշանակություն տալով ազգային կրթությանն ու դաստիարակությանը, քանզի յուրաքանչյուր տաղանդավոր երիտասարդի արժեհամակարգի հիմքում պետք է ընկած լինեն ազգային գաղափարախոսությունը, մշակութային եւ հոգեւոր արժեքները: Այսու՝ տաղանդավոր անձինք սեփական իղձի առաջ պարտավոր-

ված կլինեն իրենց գիտելիքներն ու հմտությունները ծառայեցնել ի շահ հայրենիքի: Ըստ այսմ՝ մենք կբացառենք անտարբերության քանդիչ գիտակցությունը, քանզի, համաձայն առածի. »Չեմ վախենում ընկերներից, որովհետև ամենաշատը նրանք կարող են դավաճանել, չեմ վախենում թշնամիներից, որովհետև ամենաշատը նրանք կարող են սպանել, այլ վախենում եմ անտարբեր մարդկանցից, ովքեր թույլ են տալիս դավաճանությունները սպանությունները«:

Եկեք, ուրեմն, քայլենք այնպես, որ մեր ստեղծագործ ընթացքով հետք թողնենք պատմության մեջ: Քայլենք աշխարհի հետ՝ առանց սուզվելու աշխարհայինի մեջ և հստակ պահելով մեր ազգային դիմագիծը, ապրելով այս անցողիկ աշխարհում, բայց թողնելով անանց արժեքներ դարերի համար: Արդ, »Զոր ինչ առնիցէք, սրտի մտօք գործեսջիք, իբրեւ Տեառն եւ ոչ իբեւ մարդկան« (Կող. Գ. 24):